«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «ԵՐԱԺՇՏԱԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ»

Երաժշտության դաստիարակ՝ Շուշանիկ Ալավերդյան
Մանկապարտեզ՝ «Արարատ համայնքի Արարատ գյուղի մուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 3

Գլուխ 1 Տեսական մաս ---------- 5

1.1 Պատմամշակութթային տեսությունների ակնարկ ---------- 5

Գլուխ 2 Հետազոտական աշխատանք ----------

2.1 Երաժշտադիդակտիկ խաղերի դերը երեխաների ստեղծագործական

կարողությունների զարգացման գոծընթացում ----------

Եզրակացություն ----------

Գրականության ցանկ ----------

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արվեստի բոլոր ձևերից երաժշտությունն ունի մարդու վրա ազդելու ամենամեծ ուժը՝ անմիջականորեն անրադառնալով նրա հոգուն, նրա փորձառությունների աշխարհին, տրամադրություններին: Այն կոչվում է զգացմունքների լեզու, մարդկային զգացմունքների մոդել: Երաժշտությունը հսկայական դեր է խաղում անձի հոգևոր, մշակութային, էմոցիոնալ և ճանաչողական ասպեկտների դաստիարակման գործընթացում: Այն նպաստում է երեխաների հուզական ոլորտի, ազնիվ, վեհ զգացմունքների ձևավորմանը: Երաժշտության ընկալումը զարգացնում է ճանաչողական հետաքրքրությունը, գեղագիտական ճաշակը, ընդարձակում երեխայի մտահորիզոնը, ստեղծագործական երևակայությունը:

Ա. Խաչատրյանն ասել է. «Երաժշտությունը միշտ ազնվացրել է մարդուն, մաքրել նրան հոգեպես, ծնել վսեմ զգացումներ, կոչել ինքնաճանաչման և ինքնակատարելագործման»: [2:3]

Լև Վիգոտսկին պնդում էր, որ սոցիալական երևակայան խաղը վաղ մանկության շրջանում երեխայի ամենակարևոր գործունեությունն է, քանի որ հզորագույն խթան է զարգացման և ինքնակարգավորման համար: Մեծահասակները կարող են խթանել ուսումնառությունը՝ շեշտը դնելով երեխայի«մերձակա զարգացման գոտում» գտնվող հմտությունների կամ գիտելիքների վրա: Այդ տեսությունը մեզ պատկերացում է տալիս նաև այն մասին, թե ինչու երևակայական, ստեղծագործական խաղը պետք է վաղ մանկության ցանկացած ուսումնական ծրագրի կենտրոնում լինի, և թե ինչու պետք է երեխաներին շատ ժամանակ տանք խաղալու համար:

Վերոնշյալ հեղինակները ապրել, ստեղծագործել և բարձրաձայնել են երաժշտության կարեվորության մասին նախորդ դարերում, սակայն այդ մտքերն ու տեսակետները արդիական են նաև 21-րդ դարում: Գրեթե երկու տասնամյակ աշխատելով նախադպրոցական ուսումնական հաստատությունում՝ բացահայտել եմ,

որ երաժշտությունը հոգեհարազատ և դյուրին միջոց է երեխայի մտքին և հոգուն հպվելու համար, ինչը նպաստում է նաև երեխաների մտքի ճկունությանը:

Նախադպրոցական տարիքի երեխաները ավելի հետաքրքրությամբ են լսում և ընկալում երաժշտությունը, քան պարզագույն խոսքային հաղորդակցումը: Այս ամենին շաղախենք նաև խաղի դերը երեխայի կյանքում: Եվ գալիս ենք այն *վարկածին,* որ երաժշտադիդակտիկ խաղերը կարող են նպաստել երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Խաղի միջոցով են երեխաները ձեռք բերում իրենց շրջապատող աշխարհի ու կյանքի մասին գիտելիքներ: Նրանք խաղի միջոցով են արտահայտում զանազան երևույթների նկատմամբ իրենց վերաբերմունքը: Երաժշտադիդակտիկ խաղերի օգտագործմամբ պարապմունքները դառնում են առավել բովանդակալից:

Այսպիսով, *արդիական* ենք համարում հետազոտության թեման, որի հիմնավորման համար ուսումնասիրել ենք հայտնի մանկավարժների, հոգեբանների, երաժշտագետների տեսությունները և գործնական աշխատանքում հիմնավորել վերջիններիս կարևորությունը :

Հետազոտական աշխատանքի *նպատակն* է հիմնավորել երաժշտադիդակտիկ խաղերի դերն ու նշանակությունը որպես նախադպրոցական տարիքի երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց:

ԳԼՈՒԽ 1 ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

1.1 ՊԱՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՆԱՐԿ

20-րդ դարի սկզբներին մի շարք երկրներում լայն տարածում գտավ ռիթմիկ դաստիարակության սիստեմը, որի հիմնադիրը հանդիսացավ շվեյցարացի երաժիշտ-մանկավարժ Է. Ժակ-Դալկրոզը: Նրա ստեղծած մեթոդը կայանում է հետևյալում. հատուկ վարժությունների միջոցով զարգացնել երեխաների երաժշտական լսողությունը, ռիթմի զգացողությունը, ուշադրությունը, ճկուն արտահայտիչ շարժումները: Այդ դրույթները ուշադրության արժանացան նաև խորհրդային մանկավարժների կողմից՝ հետագայում զարգանալով ֆիզոլոգիայի, հոգեբանության և երաժշտական տվյալների հիման վրա:

Երաժշտության դրական ազդեցությունը օրգանիզմի ընդհանուր ֆունկցիոնալ գործունեության վրա ապացուցված է: Այդ մասին գրել է Ի.Մ.Սեչենովը, բնութագրելով լսողական և մկանային զգացողությունների փոխադարձ կապը:

ԽՍՀՄ-յան ժամանակաշրջանում երաժշտառիթմիկ դաստիարակության համակարգի հարցով զբաղվել են Ն.Ս. Վետլուգինան, Ա.Վ .Կենեմանը, Ն.Ա. Մետլովը,Ս.Դ. Ռուդնևան և ուրիշներ [1:56]:

Ա.Ս. Մակարենկոն ժամանակին ասել է. «Ես որպես մանկավարժ պարտավոր եմ նրանց հետ խաղալ: Եթե ես միայն վարժեցնեմ և պահանջեմ, ապա կլինեմ օտար ուժ՝ միգուցե և օգտակար, բայց ոչ մտերիմ: Ես պետք է անպայման մի քիչ խաղամ: Եվ ես այդ եմ պահանջել իմ բոլոր գործընկերներից» [3:52]:

«Խաղը նրա՝ մանուկ մարդու բնական օրգանական պահանջն է, նրա լրջությունը, նրա էությունը» ասել է Հովհաննես Թումանյանը [1:64]: Մանկապարտեզի առօրյայում իրականացվող բազմաթիվ միջոցառումների շարքում կարևորվում են հատկապես երաժշտադիդակտիկ խաղերը: Դրանք մեծապես նպաստում են մանուկների երաժշտական կայուն գիտելիքների և ընկալումների զարգացմանը:

Կրթության ոլորտում ուսուցման մեջ իր առաջարկած նոր մեթոդներով ուսմոտեցումներով հայտնի է նաև իտալացի բժիշկ, մանկավարժ Մարիա Մոնտեսսորին (1870-1952): Մ. Մոնտեսսորին մեծ հաջողության է հասել վաղ հասակում՝ երեխաների ուսուցման ինովացիոն մեթոդի մշակման շնորհիվ: Մոնտեսսորիի ուսուցման մեթոդը հիմնված է ինքնուրույն աշխատանքի, պրակտիկ ուսուցման և համատեղ խաղի վրա: Նա նշում էր, որ երեխայի տան կամ կենտրոնում եղած պարագաները պետք է համապատասխանեն նրա հասակին և չափսերին: Շփվելով երեխաների հետ՝ Մոնտեսսորին նկատեց, որ թույլ երեխաներ չկան, պարզապես պետք է օգնել, որ երեխան կենտրոնանա:

Մոնտեսսորիի մանկավարժության հիմքում բազմաթիվ գիտափորձերն են, որոնք նա արել է իր սաների հետ: Այս է պատճառը, որ ինքը՝ Մոնտեսսորին, իր ուսմունքը կոչում է «Գիտական մանկավարժություն»: Մոնտեսսորիի կրթությունը բնորոշվում է «Սովորեցրու ինձ ինքնուրույն սովորել» կարգախոսով: [4]

Այժմ տեսնենք Լև Վիգոտսկու տեսությունը: Նա ակտիվորեն մասնակցել է սովետական հոգեբանությունը մարքսիստական մեթոդոլոգիայի հիման վրա վերակառուցելու գործին: Հոգեկան գործունեության բարդ ձևերը և անձի վարքն ուսումնասիրելու օբյեկտիվ մեթոդներ որոնելիս՝ Վիգոտսկին քննադատական վերլուծության է ենթարկել մի շարք փիլիսոփայական և իր ժամանակի հոգեբանական կոնցեպցիաների մեծ մասը: Ըստ Վիգոտսկու անհրաժեշտ է տարբերել վարքի երկու կողմ՝ բնական (որ կենդանական աշխարրհի կենսաբանական էվոլուցիայի արգասիք է) և կուլտուրական (որ հասարակության պատմական զարգացման արգասիք է), որոնք ձուլվել են հոգեկանի զարգացման ընթացքում:

Մանկան հոգեբանության, դեֆեկտոլոգիայի և հոգեբուժության հիման վրա, ուսումնասիրելով բարձրագույն ֆունկցիաների զարգացման ու անկման ընթացքը, հանգել է այն եզրակացության, որ գիտակցության կառուցվածքն իրենից ներկայացնում է միասնության մեջ գտնվող աֆեկտիվ, կամային և իտելեկտուալ պրոցեսների իմաստային դինամիկ համակարգ:

Լև Վիգոտսկին ասում էր, որ երեխայի կյանքի սկզբնական շրջանում հեշտ է դիտել ռեակցիաների բնական ձևեր: Այս շրջանում մշակութային զարգացման տեսանկյունից առավել նշանակալից, բեկումնային պահ է, երբ երեխան յուրացնում է առաջին գործիքները: Այս ժամանակ էլ ձևավորվում են առաջին բարդ մեխանիկական, զգայաշարժողական կապերը: Որևէ առարկայի միջոցով ինչ-որ բան անելու ձգտումը դիտվում է արդեն վեց ամսական երեխայի մոտ, ինը ամսականում բարդ կապերն առավել հստակ են հանդես գալիս: Տասը ամսականում երեխան արդեն յուրացնում է որոշակի մեխանիկական կապեր: Գործիքների օգտագործմամբ երեխայի մոտ սկսվում է զարգացման միանգամայն նոր փուլ: [5]

Ֆրիդրիխ Ֆրյոբելը (Գերմանիա, 1782-1852): Պեստալոցու աշակերտն է եղել և ստեղծել է առաջին մանկապարտեզը: Մշակել երկրաչափական ձևերով փայտե խաղային շինանյութեր և համոզված էր, փոքր երեխաների համար ամենակարևոր գործողություններն են խաղերը, երգը, պարը և այգեգործությունը:

Երաժշտադիդակտիկ խաղերը բաժանվում են խմբերի:

- Մի խմբում այն խաղերն են, որոնք երեխաներին պատկերացում են տալիս երաժշտության բնույթի (ուրախ, տխուր) և ժանրերի (երգ, պար, քայլերգ) մասին:
- Երկրորդ խումբը ներկայացնում է խաղեր, որոնց նպատակն է՝ ձևավորել պատկերացումներ երաժշտության բովանդակության և երաժշտական կերպարների վերաբերյալ:
- Երրորդ խումբը ներառում է այն խաղերը, որոնք առնչվում են երաժշտության արտահայտչամիջոցներին:

Երաժշտադիդակտիկ խաղերի անցկացման մեթոդիկան պահանջում է երեխաներին նախապես ծանոթացնել խաղի բովանդակությանն ու հստակորեն բացահայտել հանձնարարությունը: Ինչպես մեկ երեխայի, այնպես էլ ամբողջ խմբի հետ աշխատելիս՝ խաղերն անցկացվում են երաժշտության ուղեկցությամբ: Այդ խաղերի պարբերական և հետևողական կիրառումը երեխաների մեջ արթնացնում է երաժշտության նկատմամբ լուրջ հետաքրքրասիրություն: Երաժշտադիդակտիկ

խաղերն առաջին հերթին նպատակաուղղված են նախադպրոցականի երաժշտազգացողական դաստիարակությանը:

Երաժշտության ընկալումը բարդ գործընթաց է: Այն երեխայից պահանջում է ուշադրություն, և ընդհանրապես մտածողության կենտրոնացում, ինչպես նաև բազմապիսի գիտելիքներ: Այս տարիքի երեխաների նշված հատկությունները դեռևս լիարժեքորեն չեն զարգացել: Ուստի անհրաժեշտ է սովորեցնել ընկալել երաժշտության առանձնահատկությունները, նրանց ուշադրությունը հրավիրել երաժշտության արտահայտչամիջոցների վրա (տեմպ, ուժգնություն), վարժեցնել՝ տարբերելու երաժշտական ստեղծագործության բնույթը և ժանրը: Դրանք առաջացնում են լսողական, տեսողական, շարժողական ընկալումներն ամբողջությամբ:

Խաղերի ընթացքում երեխաների մեջ ձևավորվում է երաժշտական հնչյունների, դրանց հատկությունների ճիշտ ընկալման կարողություն: Աստիճանաբար ի հայտ են գալիս ռիթմի զգացողության, հնչյունի բարձրության, տեմբրային գունավորման և ուժգնության նշանների տարբերակման հմտություններ: Յուրաքանչյուր խմբում երաժշտադիդակտիկ խաղերը ներկայացված են որոշակի հաջորդականությամբ, աստիճանաբար բարդանում են երաժշտազգայական խնդիրները: Այս դեպքում պահանջվում է ինքնուրույն գործելակերպ: Երեխաներին խաղի մեջ միավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել նրանց ակտիվության չափը:

Երբեմն պասիվ երեխան չի ուզում խաղխալ ամբողջ խմբի մեջ, սակայն սիրով է խաղում մեկ երեխայի հետ: Ուրեմն՝ խաղը պետք է կազմակերպել ըստ երեխայի ցանկության: Այդ դեպքում երեխան ծանոթ մեղեդին հաճույքով է նվագում տարբեր նվագարաններով կամ գուշակում երաժշտական կենտրոնում:

Երաժշտադիդակտիկ նյութերը պահվում են երաժշտական անկյունում: Դրանք կարիք ունեն պարբերական նորացման և թարմացման: Երաժշտադիդակտիկ խաղերն անցկացվում են փոքրերի առաջին խմբից սկսած:

ԳԼՈՒԽ 2 ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԵՐԱԺՇՏԱԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂԵՐԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Այսօր մեծապես կարևորվում է երեխաների երաժշտական ստեղծագործական ընդունակությունների զարգացումը: Այս նպատակով կիրառվում են բազմաթիվ երաժշտադիդակտիկ խաղեր: Որոնց կազմակերպման համար անհրաժեշտ է ավելի շատ ինքնուրույնության հնարավորություն ընձեռել երեխաներին: Որքան ավելի ես վստահում, այնքան ավելի մեծ պատասխանատվությամբ են նրանք վերաբերվում իրենց հանձնարարությանը:

Մեզ շատ գրավել է Մարիա Մոնտեսսրիի ուսման մեթոդը հիմնված ինքնորոուրույն աշխատանքի, պրակտիկ ուսուցման և համատեղ խաղի վրա և ավելի քան արդիական եմ համարում նրա կարգախոսը «Սովորեցրու ինձ ինքնուրույն սովորել»:

Ուստի նպատակահարմար է, որ երեխաներն իրենք ընտրեն խաղը, բաժանեն դերը և նվագարանները: Ստեղծագործական ինքնուրույնության զարգացման համար անհրաժեշտ են այնպիսի պայմաններ, որոնց առկայությամբ երեխաները կարողանան ինքնուրույն զբաղվել երաժշտությամբ, կազմակերպել բազմաբնույթ խաղեր, ունկնդրել ձայներիզներ:

Ընտրելով հետազոտության թեման, որի կատարման դեպքում պետք է հասնենք թեմայի վարկածի հիմնավորմանը, առանձնացրեցինք «Արարատ համայնքի Արարատ գյուղի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ –ի միջին տարիքի խումբ, կազմեցինք շաբաթական և ամսական պլաններ և սկսեցինք աշխատանքները:

Ընթացիկ՝ եռամսյակային գործընթացներում իրականացրել ենք ինտեգրված պարապմունքներ (նկարչություն և երաժշտություն), որոնց արդյունքում ի հայտ են եկել բազում երեխաների ստեղծագործական կարողություններ:

Միջին խմբում անցկացրել ենք շաբաթական երկու պարապմունք: Մեթոդիկայի պահանջների համապատասխան՝ երեխաները խաղերի բովանդակությանն ու բնույթին ծանոթացել էին արդեն նախորդ պարապմունքների ընթացքում:

Պարապմունքն անցկացրել ենք *ԽԻԿ* համակարգով:

Պարապմունքի պլան (Միջին խումբ)

Խնդիրներ՝

- Երեխաների մոտ զարգացնել երգը, պարը, խաղը բեմադրելու կարողությունը,
- Երաժշտության ներքո հորինել խաղի հերոսներին բնորոշ շարժումներ, պարի շարժումներ
- Երաժշտության ներքո ամրացնել սաների ափերի և մատների մկանները՝ նպաստելով նվագելու, պարելու և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Վերջնարդյունքներ

- Բեմականացնի երգը, պարը, խաղը
- Հորինի պարի շարժումներ, իաղի հերոսներին բնորոշ շարժումներ
- Կատարի մատների մարզանք:

Դիդակտիկ նյութեր

- Քարտեր, որոնց վրա պատկերված են մի կողմում արև՝ մյոս կողմում անձրև,
- Օրորոց, տիկնիկ

- Թմբուկ, փայտիկներ ռիթմի համար, կարմիր թաշկինակներ՝ նախատեսված պարի համար
- Անտառի տեսարանով մեծ նկար, որի վրա գրպանիկներում տեղադրված են կենդանիների պատկերներ, կողքին զամբյուղը ձեռքին տիկնիկ
- Զամբյուղով լի կաղին, ընկույզ:

Սարքեր, տեխնոլոգիաներ

- Դաշնամուր, նվագարկիչ

Պարապմունքը անցկացվել է երաժշտական դահլիճում:

Պարապմունքի ընթացքը

Երեխաները դաշնամուրի նվագակցությամբ, քայլերգի ներքո՝ («Հայրենիք » հեղ՝. Նարինե Սահակյան), խմբի դաստիարակի հետ միասին մտնում են երաժշտական դահլիճ: Կատարել երաժշտառիթմիկ շարժումներ, (քայլքի տեսակներ, կից ցատկեր, թռիչքաձև ցատկեր) երաժշտության փոփոխությանը համապատասխան և նստել աթոռակներին:

Խթանման փուլ

Կիրառելով «Խոսող փայտիկ» մեթոդը՝ հարցերի միջոցով խթանել երեխաների հրտաքրքրությունը, պարզել, թե ինչ գիտեն թեմայի վերաբերյալ: Տալ հետևյալ հարցերը՝

1. Երեխաներ, ձեր կածիքով ի՞նչ է նշանակում ստեղծագործել:
2. Կարո՞ղ ենք հիշել մեզ ծանոթ խաղերից մի քանիսը:
3. Իսկ ի՞նչ տեսակի խաղեր գիտենք:

Իմաստի ընկալման փուլ

Պարապմունքի ընթացքում խաղացինք մի քանի երաժշտաղիդակտիկ խաղեր:

1. *Խաղ «Արև՞, թե՞ անձրև»*

Խաղի նպատակը -Որոշել մինորային և մաժորային մեղեդիները:

Նախապատրաստումը -Նախօրոք ունենալ 8x10սմ ստվարաթղթե քարտեր, որոնց մի կողմում նկարված է արև, իսկ մյուս կողմում՝ ամպ և անձրև: Քարտերը լինեն երեխաների թվին համապատասխան:

Ընթացքը: Բաժանել քարտերը երեխաներին և նվագել դաշնամուրի վրա մաժորային և մինորային ստեղծագործություններ (փոքրիկ հատվածներ)՝ առաջարկելով երեխաներին որոշել նրանց բնույթը, տրամադրությունը և ցույց տալ քարտի համապատասխան կողմը: (Մաժորի դեպքում երեխաները ցուցադրում են արև պատկերող կողմը, իսկ մինորի ժամանակ՝ ամպ և անձրև):

Վերոհիշյալ խաղի կանոնները- Ունկնդրելով երաժշտությունը, զգալով բնույթը՝ ցուցադրել համապատասխան նկարը՝ օգտագործելով նաև դեմքի միմիկաները:

2. *Խաղ «Երգ, պար, քայլերգ»*

Խաղի պարագաները - Օրորոցներ, կարմիր թաշկինակներ՝ նախատեսված պարի համար, հարվածային նվագարաններ՝ թմբուկ, փայտիկներ:

Խաղի ընթացքը - Ունկնդրելով երաժշտության տեսակները՝ երաժշտության դաստիարակի կատարմամբ, մոտենալ վերցնել համապատասխան նվագարանը կամ պարագան կատարել համապատասխան շարժումներ ըստ իրենց ստեղծագործական կարողությունների: Ամեն տեսակը ցուցադրելիս՝ մասնակցում են չորսից հինգ երեխա:

3. *Խաղ«Անտառում»*

Խաղի պարագաները - Ստվարաթղթի վրա պատկերված է անտառի տեսարան՝ 3-4 ծառ, կոճղեր: Ծառերին, կոճղին թփերի վրա սոսնձված է գրպանիկ, ուր տեղադրված են նապաստակի, սկյուռի, արջի, մեղվի, լորիկի, ծիտիկի նկարներ՝ հակառակ ուղղությամբ: Տիկնիկը դրվում է անտառի կողքին:

Խաղի ընթացքը - Ցուցադրել նկարը, նկարագրել անտառը, բարևել Հասմիկ անունով տիկնիկին, որը անտառում հատապտուղ է հավաքում, օգնել նրան գուշակելու թաքնված կենդանիներին: Երաժշտության դաստիարակը առաջարկում է լսել և գուշակել: Դաշնամուրով հնչում է իրենց ծանոթ երգի մեղեդին: Երեխաները գուշակում են: Պատասխանը ստուգելու նպատակով երեխաներին թույլ է տրվում փնտրել գրպանիկներում թաքնված կենդանիներին:

4. *Բեմականացնել «Սկյուռիկ» երգը, խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտություն՝ Նարինե սահակյանի: Օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ:*

Ընթացքը - Ընտրվում է սկյուռիկի դերակատար, որը զամբյուղը ձեռքին կենտրոնում տանում է սկյուռի դերը: Երգը կատարվում է խմբակային: Իսկ կրկներգի ժամանակ ամբողջ խումբը օգնում է սկյուռին ընկույզ ու կաղին հավաքել: Դրանց կոտրելու ժամանակ օգտագործելով ոտքերի դոփյունները որպես արտահայտչամիջոց:

5. *Խաղ «Զբոսանք»*

Խաղի նպատակը - Զարգացնել ռիթմի զգացողություն, ստեղծագործելու կարողություն:

Խաղի ընթացքը - Երեխաները նստում են կիսաշրջանաձև: Երեխաներին առաջարկվում է կատարել անսովոր զբոսանք, որի ընթացքում անհրաժեշտ է օգտագործել բնական նվագարաններ՝ ձեռքի ափերը, մատները:

Դաստիարակ. «Երեխանե՛ր, այժմ մենք կգնանք զբոսանքի: Այն մի քիչ անսովոր է: Մենք պետք է քայլենք դահլիճով և մեզ կօգնեն մեր ձեռքերի ափերը և մատները: Ահա մենք ձեզ հետ իջնում ենք աստիճաններով»: Ծափով ցույց տալ համապատասխան ռիթմիկ պատկերը: Միանում են նաև երեխաները:

Դաստիարակ. «Իսկ այժմ դուրս ենք գալիս փողոց: Փայլում է արևը: Բոլորն ուրախանում են և վազում՝ ահա այսպես»: Արագ հարվածելով ցույց է տալիս վազքը: Երեխաները կրկնում են:

Դաստիարակ. «Տաթևը վերցնում է գնդակը և սկսում հարվածել հատակին: Ապա նա գնդակը վերև է նետում և օդում կորցնում այն»: Դաստիարակի ձեռքերը մնում են օդում: Դաստիարակի հետ միասին կրկնում են նաև երեխաները:

Դաստիարակ. «Ահա Տաթևի ձեռքից փախավ գնդակը»: Անհամաչափ ծափերով ցույց է տալիս դաստիարակը:

Դաստիարակ. «Հանկարծ երկնքում հայտնվում է ամպը, ծածկում արևը, և սկսում է անձրև տեղալ: Սկզբում այն թույլ է, կաթիլները հատ ու կենտ»: Դաստիարակը ցույց է տալիս մատները ճտտացնելով:

Դաստիարակ. «Հետո սկսվում է տեղատարափը»: Դաստիարակը ցույց է տալիս ձեռքի ափերը հարվածելով ծնկներին, ապա՝ ոտքերի դոփյուններով:

Դաստիարակ. «Աստիճանաբար անձրևը դանդաղում է, ապա՝ դադրում»: Այստեղ դադարում են բոլոր ձայները:

Դաստիարակ. «Այժմ բոլորս բարձրանում ենք աստիճաններով, մտնում դահլիճ»: Ռիթմիկ պատկերը շարունակվում է համաչափ՝ ապա դադարում:

Կշռադատում

Պարապմունքի ամփոփումը տալ «Հաջողության աստիճան» մեթոդի միջոցով: Երեխաներին առաջարկվեց երեք գույնի աստիճան՝ կարմիր - չեմ կարողանում, դեղին - օգնության կարիք ունեմ, կանաչ - կարողանում եմ: Յուրաքանչյուր երեխա ինքն ընտրեց աստիճանի վրա կանգնելու իր տեղը՝ բնութագրելով ուսումնասիրվող նյութի իր յուրացման մակարդակը: Արդյունքում խմբի ճնշող մեծամասնությունը կանաչ գույնի աստիճանի վրա էր, միայն երկու – երեք երեխա իրենց տեսան դեղին աստիճանի վրա: Վերջիններիս հետ կպլանավորենք անհատական աշխատանք:

Հարկ ենք համարում նշել, որ խմբում ունենք ԿԶԱՊԿ ունեցող սան: Ողջ պարապմունքի ընթացքում նրան չստացվեց կենտրոնացնել որևէ խաղի վրա, ահա թե ինչու նրա հետ անցկացրեցինք իր կարողություններին համապատասխան խաղ: ԿԶԱՊԿ ունեցող սանի հետ խաղացինք հետևյալ խաղը:

Խաղի նպատակը – ճանաչել երաժշտական գործիքներից ջութակը և դաշնամուրը, ունկնդրելով տարբերակի վերջիններիս ձայները:

Խաղի ընթացքը – Սեղանին դրված են ջութակ և դաշնամուր պատկերող 2 քարտեր: Նվագարկիչով հնչում են երաժշտական գործիքների համապատասխան ստեղծագործություններ: ԿԶԱՊԿ ունեցող սանը պետք է ընկալի երաժշտական գործիքների համապատասխանող ձայնը և ցույց տա համապատասխան քարտը:

Խաղի ընթացքը չընթացավ սահուն և դյուրին, սակայն ԿԶԱՊԿ ունեցող սանի միայն պարապմունքին ներգրավելն անգամ մեծ առաջընթաց է:

Ստորև ներկայացված են նաև մանկապարտեզի տնօրենի և մեթոդիստի կատարած գնահատման արդյունքները՝ դիտարկման թերթիկների տեսքով:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Ամսաթիվը՝ *05.12.2023*
ՆՈՒՀ-ի անվանումը՝ *«Արարատ համայնքի Արարատ գյուղի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ*
Տարիքային խումբ՝ *Միջին Ա (4-5 տարեկան)*
Ծրագրային բաղադրիչ՝ *Երաժշտություն*
Դաստիարակի անունը, ազգանունը՝ *Շուշանիկ Ալավերդյան*
Ներկա սաների թիվը՝ *27*

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	Այո	Մասամբ	Ոչ	Մեկնաբանություն
Պարապմունքը պլանավորված է, ձևակերպված են պարապմունքի թեման, նպատակը, քայլերը և վերջնարդյունքները:	√			
Քայլերը բխում են սահմանված նպատակից, փոխկապակցված են:	√			
Դաստիարակը մոտիվացիա է ստեղծում սաների մեջ և խթանում նրանց հետաքրքրությունը:	√			
Պարապմունքի ընթացքում պահպանվում են բոլոր փուլերի սահուն հերթագայումները:	√			
Դաստիարակն ապահովում է յուրաքանչյուր սանի ներգրավվածությունը պարապմունքի ընթացքում:	√			
Դաստիարակը կիրառում է ձևավորող գնահատման տարբեր ձևեր և գործիքներ:	√			
Դաստիարակն ապահովում է հետադարձ կապ յուրաքանչյուր սանի հետ:	√			
Դաստիարակը հարգանքով է վերաբերվում բոլոր սաներին:	√			
Դաստիարակն արձագանքում է բոլոր սաների կարիքներին:	√			

Դաստիարակը խոսում է պարզ ու գրագետ, ունի խոսքի չափավոր տեմպ և այլն):	√			
Դաստիարակի և սաների կողմից ապահովվում է դրական հուզական միջավայր պարապմունքի ընթացքում:	√			
Պարապմունքի ընթացքում կիրառվում են խաղերի տարբեր տեսակներ /դիդակտիկ խաղ, խաղ-բեմականացում և այլն/:	√			Անցկացվեցին մի քանի երաժշտադիդակտիկ խաղեր
Առկա են դիդակտիկ պարագաներ, սարքավորումներ, կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների համար հարմարեցումներ՝ ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար:	√			
Պարապմունքի դիդակտիկ պարագաները սաների համար հասանելի վայրում են տեղադրված, բաշխիչ նյութերը համապատասխանում են նրանց քանակին:	√			

Եզրակացություն՝

Երաժշտության դաստիարակի երկար տարիների աշխատանքային փորձի և մշտապես նորը սովորելու, կիրառելու մեծ ձգտման արդյունքում ծնվում են նմանատիպ հրաշալի պարապմունքներ: Առաջին անգամը չէր, որ հիացանք երաժշտության դաստիարակի գեղագիտական բարձր ճաշակով և երեխաների հետ աշխատելու բարձր մակարդակով: Նրա՝ սաների հետ հաղորդակցվելու, գեղեցիկը մատուցելու ձևերը ակնահաճո են, հատկապես, երբ տեսնում ես երեխանի և դաստիարակի միջև փոխադարձ սերը և հարգանքը: Գրագետ պլանավորած և գեղեցիկ մատուցված երաժշտության պարապմունք էր:

Մանկապարտեզի տնօրեն՝ Գ. Գ

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Ամսաթիվը՝ *05.12.2023*
ՆՈՒՀ-ի անվանումը՝ *«Արարատ համայնքի Արարատ գյուղի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ*
Տարիքային խումբ՝ *Միջին Ա (4-5 տարեկան)*
Ծրագրային բաղադրիչ՝ *Երաժշտություն*
Դաստիարակի անունը, ազգանունը՝ *Շուշանիկ Ալավերդյան*
Ներկա սաների թիվը՝ *27*

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	Այո	Մասամբ	Ոչ	Մեկնաբանություն
Պարապմունքը պլանավորված է, ձևակերպված են պարապմունքի թեման, նպատակը, քայլերը և վերջնարդյունքները:	√			
Քայլերը բխում են սահմանված նպատակից, փոխկապակցված են:	√			
Դաստիարակը մոտիվացիա է ստեղծում սաների մեջ և խթանում նրանց հետաքրքրությունը:	√			
Պարապմունքի ընթացքում պահպանվում են բոլոր փուլերի սահուն հերթագայումները:	√			
Դաստիարակն ապահովում է յուրաքանչյուր սանի ներգրավվածությունը պարապմունքի ընթացքում:	√			
Դաստիարակը կիրառում է ձևավորող գնահատման տարբեր ձևեր և գործիքներ:	√			
Դաստիարակն ապահովում է հետադարձ կապ յուրաքանչյուր սանի հետ:	√			
Դաստիարակը հարգանքով է վերաբերվում բոլոր սաներին:	√			
Դաստիարակն արձագանքում է բոլոր սաների կարիքներին:	√			
Դաստիարակը խոսում է պարզ ու գրագետ, ունի խոսքի չափավոր տեմպ և այլն):	√			
Դաստիարակի և սաների կողմից ապահովվում է դրական հուզական միջավայր պարապմունքի	√			

ընթացքում:				
Պարապմունքի ընթացքում կիրառվում են խաղերի տարբեր տեսակներ /դիդակտիկ խաղ, խաղ-բեմականացում և այլն/:	√			Մեծամասամբ կիրառվեցին նախապես ուսուցանված երաժշտադիդակտիկ խաղեր
Առկա են դիդակտիկ պարագաներ, սարքավորումներ, կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների համար հարմարեցումներ՝ ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար:	√			
Պարապմունքի դիդակտիկ պարագաները սաների համար հասանելի վայրում են տեղադրված, բաշխիչ նյութերը համապատասխանում են նրանց քանակին:	√			

Դիտարկում՝

Երաժշտության օրինակելի պարապմունք, որտեղ ևս մեկ անգամ ականատեսը եղանք արհեստավարժ, գրագետ և երեխայասեր երաժշտության դաստիարակի փայլուն աշխատանքին: Երաժշտության այս պարապմունքը նպատակ էր հետապնդում բացահայտելու երաժշտադիդակտիկ խաղերի միջոցով սաների ստեղծագործելու ունակության զարգացումը: Կիրառված մեթոդները, հնարները օգնեցին նրան հասնելու իր առջև դրված նպատակին:

Օրինակելի այս պարապմունքը հագեցած էր և հաճելի: Եվս մեկ անգամ փաստեցինք այն հանգամանքը, որը հետևողական աշխատանքի և ինքնակրթության տված արդյունքները չեն կարող անտեսվել և չկիրառվել աշխատանքում:

Մանկապարտեզի մեթոդիստ՝ Թ. Ա

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ ուսումնասիրելով տաբեր տեսաբանների տեսությունները, դիրքորոշումները և տեսակետները՝ կատարեցինք հետազոտություն:

Հետազոտության արդյունքները հիմնավորեցին մեր այն վարկածը, որ երաժշտադիդակտիկ խաղերը նպաստում են երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Երաժշտադիդակտիկ խաղերի անցկացման ժամանակ երեխաները դրսևորում են մեծ հետաքրքրություն և ակտիվություն: Նրանց հաճույք է պատճառում ընձեռնված ազատությունը և ստեղծագործելու հնարավորությունը:

Երաժշտադիդակտիկ խաղերի յուրահատկությունը կայանում է նրանում, որ երեխային տրվում են խաղի կանոններ, որոնք, սակայն, չեն սահմանափակում նրա ստեղծագործելու, երևակայելու և հորինելու հնարավորությունները:

Հատկանշական եմ համարում այն փաստը, որը հայտնաբերեցի հետազոտական աշխատանքը իրականացնելու ժամանակ. պարապմունքի անցկացման ժամանակ մանկավարժը պետք է զգոնություն և ուշադրություն ցուցաբերի յուրաքանչյուր երեխայի կատարած շարժման նկատմամբ, որում երեխան արտահայտում և ի ցույց է դնում իր ներաշխարհի ողջ էությունը: Սա օգնում է նաև մանկավարժին հայտնաբերելու այն տաղանդավոր սաներին որոնք դեռ չեն բացահայտվել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Շ.Շ.Մկրտչյան, երաժշտությունը ման կապարտեզում,1991
2. Շուշանիկ Մկրտչյան, երաժշտությունը մանկապարտեզում, 2007
3. Կարինե Ղազարյան, Գայանե Թադևոսյան երաժշտական պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզի ավագ խմբում, 2019
4. https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%B8%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%BD%D5%B8%D6%80%D5%AB%D5%AB_%D5%B4%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%AA%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6
5. https://www.doctors.am/l-vigotski